



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

18.01.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ՍԱԼ ՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 4/22 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑԱԾ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑՎԱԾ 66.6ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ 0.00598 ՀԵԿՏԱՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՎ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՍԵՎԱԴԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2 կետով, 35-րդ կետի դ) ենթակետով, հիմք ընդունելով Գորիս համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 15-ի թիվ 15-Ա որոշման դրույթները, և քննության առնելով Սևադա Վարդանյանի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի դիմումը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝

1. Գորիս քաղաքի Սալ քար թաղամասի թիվ 4/22 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում, Սևադա Վարդանյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինականացված և համայնքային սեփականություն զրանցված 66.6քմ արտաքին (58.1քմ ներքին) մակերեսով ավտոտնակը (կադ. ծածկագիր՝ 09-003-0093-0224, վկ.՝ 22122022-09-0036) (66.6x1422=94710) իննսուկչորս հազար յոթ հարյուր տաս ՀՀ դրամով և 0.00598հա մակերեսով սպասարկման հողատարածքը (59.8x1878=112300) մեկ հարյուր տասներկու հազար երեք հարյուր ՀՀ դրամով՝ ուղղակի վաճառքի միջոցով օտարել Սևադա Վարդանյանին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:



ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ